



**«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական
կենտրոն**

**ՀՀ Շիրակի մարզի Բավրա, Աշոցք և Ցողամարզ գյուղական համայնքների
2013-2014թթ. բյուջեների հետազոտություն**

Ղարիբ Հարությունյան

«Գյումրի» 2014

Ներածություն

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում դեռևս կան բավական լուրջ թերություններ և բացթողումներ, որոնք զգալիորեն խոչընդոտում են ՏԻՄ-երին՝ արդյունավետ կերպով իրականացնելու օրենքով իրենց վերապահված լիազորություններն ու գործառույթները, ինչից ուղղակիորեն կախված են հանրային ծառայությունների մատուցման հասանելիությունը և որակը: ՀՀ համայնքներում ներկայումս քառամյա զարգացման ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներն արդյունավետ կերպով չեն ընթանում: Սա բերում է նաև համայնքների բյուջեների պլանավորման և իրականացման արդյունավետության նվազմանը: ՏԻՄ-երն օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում մշակում են ավելի շուտ ծախսային, քան ծրագրային բյուջեներ՝ հետապնդելով առավելապես ընթացիկ նպատակներ՝ բյուջետային եկամուտների խիստ ցածր մակարդակի պատճառով: Պետք է փաստել, որ տեղական ինքնակառավարման համակարգի կայացման անհրաժեշտ պայմաններից մեկը հանդիսանում է համայնքների ֆինանսական կարողությունների ամրապնդումը:

Բյուջեն համայնքի առջև ծառացած հիմնախնդիրների լուծման և համայնքի զարգացման ծրագրերի իրականացման ֆինանսական հիմքն է, և դրա մշակման ու իրականացման գործընթացները պետք է լինեն ծրագրավորված և կանոնակարգված: Համայնքի բյուջետային գործընթացը ներառում է յուրաքանչյուր տարվա բյուջեն կազմելու, քննարկելու, հաստատելու, կատարելու և վերահսկելու ուղղությամբ ՏԻՄ-երի՝ օրենքով կանոնակարգված գործունեությունը: Այս գործընթացում տեղ գտած թերությունները և բացթողումները կարող են լուրջ բացասական հետևանքների հանգեցնել՝ համայնքի առաջադրված խնդիրների արդյունավետ լուծման, ֆինանսական քաղաքականության մշակման և իրականացման, ֆինանսական կարգապահության, բյուջեի կատարման վերահսկողության ապահովման, բյուջետային գործընթացի տարբեր փուլերին հանրության մասնակցության ապահովման և այլ առումներով:

Հաշվի առնելով համայնքների բյուջեների կազմելու, քննարկելու, հաստատելու, կատարելու և վերահսկելու կարևորությունը ՏԻՄ կողմից ընդունվող որոշումների

շարքում, իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի Բավրա, Աշոցք և Յոդամարգ համայնքների 2013-2014թթ. բյուջեների հետազոտություն:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակն է՝ ՀՀ Շիրակի մարզի Բավրա, Աշոցք և Յոդամարգ համայնքների բյուջեների պլանային և փաստացի ցուցանիշների վերլուծության ու հետազոտության արդյունքում բացահայտել համայնքի բյուջեի մշակման ու կատարման գործընթացների թերություններն ու բացթողումները և կատարել համապատասխան առաջարկություններ՝ դրանց բարելավման ուղղությամբ:

Հետազոտության խնդիրներն են՝

- Բավրա, Աշոցք և Յոդամարգ համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի կազմի ու կառուցվածքի, շարժընթացի օպտիմալության վերլուծություն,
- Բավրա, Աշոցք և Յոդամարգ համայնքների բյուջեների պլանային և 2014թ. կիսամյակային փաստացի հավաքագրված եկամուտների և ծախսերի ուսումնասիրություն և վերլուծություն,
- Բավրա, Աշոցք և Յոդամարգ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի՝ նախորդ տարիների համանման ցուցանիշների հետ համեմատական վերլուծություն
- Բավրա, Աշոցք և Յոդամարգ համայնքների բյուջեների ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ըստ համայնքների:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների հիմնադրույթները: Հետազոտության հիմքում դրվել են տեղական ինքնակառավարման բնագավառում բյուջետավարման և համայնքների բյուջեների ձևավորման ու օգտագործման հետ առնչվող՝ ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան գիտնականների աշխատություններն ու գիտական ուսումնասիրությունները, տեղական բյուջետային համակարգը կարգավորող օրենսդրությունը: Հետազոտության իրականացման համար կիրառվել է վիճակագրական, համեմատական, գրաֆիկական, գործոնային վերլուծությունների մեթոդներ: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Շիրակի մարզի Բավրա, Աշոցք և Յոդամարգ համայնքների ղեկավարների կողմից

տրամադրված, ինչպես նաև ՀՀ Տարածքային Կառավարման նախարարության կայքում առկա տեղեկատվությունը:

ՀՀ Շիրակի մարզի Բավրա, Աշոցք և Յոդամարգ գյուղական համայնքների հետազոտության արդյունքները

Նախ, կատարենք վերլուծություններ առանձին համայնքների կտրվածքով:


Յոդամարգ

Յոդամարգ համայնքի բյուջեի եկամտային ցուցանիշների վերլուծություն

Ստորև ներկայացնենք Յոդամարգ համայնքի բյուջեի եկամտային ցուցանիշների մանրամասն վերլուծությունը:

Նախ, դիտարկենք Յոդամարգ համայնքի բյուջեի եկամուտների պլանային ցուցանիշների շարժընթացը 2013-2014թթ. ժամանակահատվածում (գծանկար 1):

Գծանկար 1. Յոդամարգ համայնքի 2013-2014թթ. բյուջեների ընդհանուր եկամուտների պլանային ցուցանիշների շարժընթացը (հազ. դրամ)




Գծանկարից պարզ է դառնում, որ Յոդամարգ համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտները 2014թ-ին պլանավորվել են 3,510, 000 դրամով կամ 25,8 %-ով պակաս 2013թ. համանման ցուցանիշից: Չնայած համաձայն ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կայքում առկա տեղեկատվության՝ 2013թ. Յոդամարգ համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների փաստացի կատարողականը կազմել է 12.375 մլն ՀՀ

դրամ, այն 2014թ. պլանավորվել է նախորդ տարվա փաստացի կատարողականից մոտ 20 %-ով պակաս:

Հարկ ենք համարում նշել, որ Յողամարզ համայնքի ինչպես 2013թ, այնպես էլ 2014թ. բյուջեների ֆոնդային մասերում որևէ եկամուտ չի նախատեսվել, որը վկայում է համայնքի երկարաժամկետ զարգացման հեռանկարի բացակայության մասին:

Կառուցվածքային վերլուծության առումով կարևոր նշանակություն ունի նաև 2 հարաբերական ցուցանիշների վերլուծությունը՝ համայնքի բյուջեների պլանային պաշտոնական դրամաշնորհների և սեփական եկամուտների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների մեջ:


Գծանկար 2. Յողամարզ համայնքի 2013-2014թթ.բյուջեների պլանային սեփական եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտներում



Գծանկարից կարող ենք եզրակացնել, որ Յողամարզ համայնքի 2013-2014թթ. բյուջեների պլանային ցուցանիշներում բավական բարձր է պաշտոնական տրանսֆերտների տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար կազմելով 2013թ. 69,3%, իսկ 2014թ. 57, 5 %: Չնայած 2014թ. այս ցուցանիշը պլանավորվել է 12,2 %-ով պակաս, սակայն դեռևս այն գտնվում է բավական բարձր մակարդակի վրա, որը վտանգում է համայնքի ինքնուրույնությունն ու բարձրացնում կախվածությունը պետությունից հատկացվող միջոցներից:

Սեփական եկամուտների պլանային ցուցանիշները դիտարկենք ըստ առանձին եկամտատեսակների, որի համար կազմենք գծանկար 3-ը:

Գծանկար 3. Յողամարզ համայնքի 2013-2014թթ. բյուջեների սեփական եկամուտների պլանային ցուցանիշներն ըստ առանձին եկամտատեսակների




Գծանկարում արտացոլված տվյալները հավաստում են, որ Յողամարզ համայնքի 2014թ. բյուջեի սեփական եկամուտներից երկուսի գծով պլանավորվել են առավել բարձր ցուցանիշներ, այդ թվում փոխադրամիջոցների և շենք շինությունների համար հավաքագրվող գույքահարկը պլանավորվել է 13,6%-ով, իսկ հողի հարկը և համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարները համապատասխանապար 0,5%-ով և 0,1 %-ոց ցածր 2013թ. համանման ցուցանիշների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, 2013թ. պլանային սեփական եկամուտներն ունեն գծանկար 4-ում պատկերված կառուցվածքը՝


Գծանկարից երևում է, որ Յողամարզ համայնքի 2014թ. բյուջեում առավել բարձր է պլանավորվել շինություններից հավաքագրվող գույքահարկը՝ ի հաշիվ հողի հարկի համանման ցուցանիշի նվազեցման: Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարները և փոխադրամիջոցների համար գանձվող գույքահարկը պլանավորվել են նույն տեսակարար կշիռներով:

Գծանկար 4. Ցողամարզ համայնքի 2013-2014թթ. բյուջեների սեփական եկամուտների պլանային ցուցանիշների կառուցվածքը



Ուսումնասիրելով Ցողամարզ համայնքի 2013թ. փաստացի կատարողական ցուցանիշները՝ ներկայացնենք գծանկար 5-ը:

Գծանկար 5. Ցողամարզ համայնքի 2013թ. բյուջեի պլանային և փաստացի եկամտային ցուցանիշները




Գծակարից պարզ է դառնում, որ ընդհանուր եկամուտների կատարողական ցուցանիշը 2013թ. կազմել է 91,2 %, սակայն սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը կազմել է ընդամենը 71,4 %: Սա վկայում է սեփական եկամուտների հավաքագրման առկա խնդիրների մասին:

Ցողամարզ համայնքի 2013-2014թթ. բյուջեի ծախսային ցուցանիշների վերլուծություն

Ցողամարզ համայնքի 2013-2014թթ. բյուջեի ծախսերի պլանային ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ընդհանուր առմամբ պլանավորվել են ավելի ցածր նախորդ տարվա նկատմամբ:

Գծանկար 6. Ցողամարզ համայնքի 2013-2014թթ. բյուջեների ծախսերի շարժընթացը




Այսպես, ընդհանուր ծախսերը 2013թ. նկատմամբ պլանավորվել են 28,8 %-ով պակաս, որից վարչական բյուջեի ծախսերը 31 %-ով պակաս են պլանավորվել, իսկ ֆոնդային բյուջեի ծախսերը պլանավորվել են 50 %-ով ավել:

Համայնքի բյուջեի հիմնական ծախսատեսակների պլանային ցուցանիշներն ուսումնասիրենք ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման /գծանկար 7/:

Ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի պլանային ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծախսատեսակների գծով 2014թ. համայնքի բյուջեում ընդհանուր առմամբ պլանավորվել են համեմատաբար ցածր ցուցանիշներ, իսկ որոշների գծով՝ բարձր ցուցանիշներ: Այսպես, 2013թ. նկատմամբ բավական ցածր են պլանավորվել աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսերը/շուրջ 37%-ով

ցածր/, իսկ փաստացի սոցիալական ապահովագրության չի նախատեսվել, ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը 18 %-ով, սոցիալական նպաստներն ու կենսաթոշակները 27%-ով ցածր: 2013թ. համայնքի բյուջեի համանման ցուցանիշների նկատմամբ բավականաչափ բարձր են պլանավորվել այլ ծախսերը /շուրջ 2.5 անգամ ավելի/ և մեքենաներին ու սարքավորումներին ուղղվող ծախսերը /50 %-ով ավելի:

Գծանկար 7. Ցողամարզ համայնքի 2013-2014թթ.բյուջեների հիմնական ծախսատեսակների պլանային ցուցանիշներն ըստ տնտեսագիտական դասակարգման




Համանման վերլուծություն կատարենք նաև ըստ գործառնական դասակարգման ծախսերի ուղղությամբ:

Գծանկարից պարզ է դառնում, որ գործառնական դասակարգմամբ գրեթե բոլոր ոլորտներում պլանավորվել են ավելի քիչ ծախսեր, բացառությամբ կրթության և հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերի: Այդ ոլորտներն են ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները /28%-ով ցածր /, տնտեսական հարաբերությունները /շուրջ 39%-ով ցածր/, շրջակա միջավայրի պաշտպանությունը /շուրջ 24%-ով ցածր/, սոցիալական պաշտպանությունը /38 %-ով ցածր/, կրթությունը /8 7,6%-ով ցածր/:

Ցողամարզ համայնքի բյուջեում 2014թ. ընթացքում ավագանու որոշմամբ կատարված որևէ փոփոխության, ինչպես սահմանված տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերի, ինչպես նաև կատարված աշխատանքների մասին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Գծանկար 8. Յողամարզ համայնքի 2013-2014թթ.բյուջեների հիմնական ծախսատեսակների պլանային ցուցանիշներն ըստ գործառնական դասակարգման



Աշոցք


Աշոցք համայնքի բյուջեի եկամտային ցուցանիշների վերլուծություն

Ստորև ներկայացնենք նաև Աշոցք համայնքի բյուջեի եկամտային ցուցանիշների մանրամասն վերլուծությունը:

Նախ, դիտարկենք Աշոցք համայնքի բյուջեի եկամուտների պլանային ցուցանիշների շարժընթացը 2013-2014թթ.ժամանակահատվածում (գծանկար 9):


Գծանկարից պարզ է դառնում, որ Աշոցք համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտները 2014թ-ին պլանավորվել են շուրջ 27 %-ով ավելի 2013թ. համանման ցուցանիշից: Հարկ ենք համարում նշել, որ Աշոցք համայնքի ինչպես 2013թ, այնպես էլ 2014թ. բյուջեների ֆոնդային մասերում որևէ եկամուտ չի նախատեսվել:

Գծանկար 9. Աշոցք համայնքի 2013-2014թթ. բյուջեների ընդհանուր եկամուտների պլանային ցուցանիշների շարժընթացը (հազ. դրամ)



Կառուցվածքային վերլուծության առումով կարևոր նշանակություն ունի նաև 2 հարաբերական ցուցանիշների վերլուծությունը՝ համայնքի բյուջեների պլանային պաշտոնական դրամաշնորհների և սեփական եկամուտների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների մեջ:

Գծանկար 10. Աշոցք համայնքի 2013-2014թթ.բյուջեների պլանային սեփական եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտներում




Գծանկարից կարող ենք եզրակացնել, որ Աշոցք համայնքի 2013-2014թթ. բյուջեների պլանային ցուցանիշներում բավական բարձր է պաշտոնական տրանսֆերտների

տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար կազմելով 2013թ. 66,3 %, իսկ 2014թ. 73,1 %: Փաստորեն, 2014թ. այս ցուցանիշը պլանավորվել է 39,9 %-ով ավելի, որը համարվում է բավական բարձր կախվածության մակարդակ պետական բյուջեից հատկացվող միջոցներից:

Սեփական եկամուտների պլանային ցուցանիշները դիտարկենք ըստ առանձին եկամտատեսակների, որի համար կազմենք գծանկար 11-ը:

Գծանկար 11. Աշոցք համայնքի 2013-2014թթ. բյուջեների սեփական եկամուտների պլանային ցուցանիշներն ըստ առանձին եկամտատեսակների




Գծանկարում արտացոլված տվյալները հավաստում են, որ Աշոցք համայնքի 2014թ. բյուջեի սեփական եկամուտներից մի քանիսի գծով պլանավորվել են առավել բարձր ցուցանիշներ, այդ թվում փոխադրամիջոցների և շենք շինությունների համար հավաքագրվող գույքահարկը պլանավորվել է 11,3 և 1,9 %-ով, տեղական տուրքերը 4,3 %-ով, գույքի վարձակալությունից եկամուտները 17,8 %-ով, Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերը 5,1 %-ով, իսկ տեղական վճարները 4,3%-ով: Փոխարենը բավական ցածր են պլանավորվել համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարները և համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր՝ համապատասխանաբար 66 %-ով և 22 %-ով պակաս նախորդ տարվա համանման ցուցանիշներից:

Ընդհանուր առմամբ, 2013թ. պլանային սեփական եկամուտներն ունեն գծանկար 12-ում պատկերված կառուցվածքը:

Գծանկարից երևում է, որ Աշոցք համայնքի 2014թ. բյուջեում 2013թ. նկատմամբ առավել բարձր տեսակարար կշիռով է պլանավորվել փոխադրամիջոցների համար հավաքագրվող գույքահարկը, հողի հարկը և պետության կողմից պատվիրակված լիազորությունները:


Գծանկար 12. Աշոցք համայնքի 2013 և 2014թթ. բյուջեների սեփական եկամուտների պլանային ցուցանիշների կառուցվածքը



Ուսումնասիրելով Աշոցք համայնքի 2013թ. փաստացի կատարողական ցուցանիշները՝ ներկայացնենք գծանկար 13-ը:

Գծակարից պարզ է դառնում, որ ընդհանուր եկամուտների կատարողական ցուցանիշը 2013թ. կազմել է 101.4 %, իսկ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը կազմել է ընդամենը 105 %: Սա վկայում է սեփական եկամուտների հավաքագրման բարձր մակարդակի մասին:


Գծանկար 13. Աշոցք համայնքի 2013թ. բյուջեի պլանային և փաստացի եկամտային ցուցանիշները



Աշոցք համայնքի 2013-2014թթ.բյուջեների ծախսային ցուցանիշների վերլուծություն

Աշոցք համայնքի 2013-2014թթ. բյուջեների ծախսերի պլանային ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ընդհանուր առմամբ պլանավորվել են ավելի ցածր նախորդ տարվա նկատմամբ:


Գծանկար 14. Աշոցք համայնքի 2013-2014թթ. բյուջեների ծախսերի շարժընթացը



Կարող ենք փաստել, որ 2014թ. Աշոցք համայնքի բյուջեի ինչպես ընդհանուր ծախսերը, այնպես էլ վարչական և ֆոնդային մասերն առանձին-առանձին պլանավորվել են ավելի բարձր, քան նախորդ տարվա բյուջեում: Այսպես, ընդհանուր ծախսերը 2013թ. նկատմամբ պլանավորվել են 15 %-ով ավել, որից վարչական բյուջեի ծախսերը 12,2 %-ով, իսկ ֆոնդային բյուջեի ծախսերը պլանավորվել են 26 %-ով ավել:

Համայնքի բյուջեի հիմնական ծախսատեսակների պլանային ցուցանիշներն ուսումնասիրենք ըստ տնտեսագիտական և ըստ գործառնական դասակարգման:


Գծանկար 15. Աշոցք համայնքի 2013-2014թթ.բյուջեների հիմնական ծախսատեսակների պլանային ցուցանիշներն ըստ տնտեսագիտական դասակարգման



Ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի պլանային ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երեք ծախսատեսակների գծով 2014թ. համայնքի բյուջեում ընդհանուր առմամբ պլանավորվել են համեմատաբար ցածր ցուցանիշներ, իսկ մյուս երեքի գծով՝ բարձր ցուցանիշներ: Այսպես, 2013թ. նկատմամբ բավական բարձր են պլանավորվել աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսերը /շուրջ 22,4 %-ով/, մեքենաների ու սարքավորումներին ուղղվող ծախսերը /շուրջ 6,5 %/ և շենքերի ու շինություններին ուղղվող ծախսերը 23.9 %, իսկ փաստացի սոցիալական ապահովագրության ծախսեր չի նախատեսվել: 2013թ. համայնքի բյուջեի համանման ցուցանիշների նկատմամբ ցածր են պլանավորվել սոցիալական նպաստներին ու կենսաթոշակներին ուղղվող ծախսերը /37.5%, ծառայությունների ու ապրանքների ձեռքբերումը՝ 13.2 %-ով/:

Համանման վերլուծություն կատարենք նաև ըստ գործառնական դասակարգման ծախսերի ուղղությամբ:

Գծանկար 16. Աշոցք համայնքի 2013-2014թթ.բյուջեների հիմնական ծախսատեսակների պլանային ցուցանիշներն ըստ գործառնական դասակարգման



Գծանկարից պարզ է դառնում, որ գործառնական դասակարգմամբ գրեթե բոլոր ոլորտներում պլանավորվել են ավելի շատ ծախսեր, բացառությամբ հանգստի, մշակույթի և կրոնի, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների:

Աշոցք համայնքի բյուջեում 2014թ. ընթացքում մեկ անգամ ավագանու որոշմամբ կատարվել են փոփոխություններ ու լրացումներ համայնքի բյուջեում, ինչպես նաև համայնքի ղեկավարի կողմից մանրամասնորեն ներկայացվել են համայնքի բյուջեի միջոցների հաշվին կատարված աշխատանքների և իրականացված ծրագրերի մասին:


Բավրա

Բավրա համայնքի բյուջեի եկամտային ցուցանիշների վերլուծություն

Ստորև ներկայացնենք նաև Բավրա համայնքի բյուջեի եկամտային ցուցանիշների վերլուծությունը:

Դիտարկենք Բավրա համայնքի բյուջեի եկամուտների պլանային ցուցանիշների շարժընթացը 2013-2014թթ.ժամանակահատվածում (գծանկար 17):


Գծանկար 17. Բավրա համայնքի 2013-2014թթ. բյուջեների ընդհանուր եկամուտների պլանային ցուցանիշների շարժընթացը (հազ. դրամ)



Գծանկարից պարզ է դառնում, որ Բավրա համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտները 2014թ-ին պլանավորվել են շուրջ 20 %-ով ավելի 2013թ. համանման ցուցանիշից: Հարկ ենք համարում նշել, որ Բավրա համայնքում նույնպես և 2013թ, և 2014թ. բյուջեների ֆոնդային մասում որևէ եկամուտ չի նախատեսվել:

Կառուցվածքային վերլուծության առումով կարևոր նշանակություն ունի նաև 2 հարաբերական ցուցանիշների վերլուծությունը՝ համայնքի բյուջեների պլանային պաշտոնական դրամաշնորհների և սեփական եկամուտների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների մեջ:


Գծանկար 18. Բավրա համայնքի 2013-2014թթ.բյուջեների պլանային սեփական եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտներում



Գծանկարից կարող ենք եզրակացնել, որ Բավրա համայնքի 2013-2014թթ. բյուջեների պլանային ցուցանիշներում բավական բարձր է պաշտոնական տրանսֆերտների տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար կազմելով 2013թ. 44 %, իսկ 2014թ. 56 %: Փաստորեն, 2014թ. այս ցուցանիշը պլանավորվել է 12 %-ով ավելի, որը համարվում է բավական բարձր կախվածության մակարդակ պետական բյուջեից հատկացվող միջոցներից:

Սեփական եկամուտների պլանային ցուցանիշները դիտարկենք ըստ առանձին եկամտատեսակների, որի համար կազմենք գծանկար 19-ը:


Գծանկար 19. Բավրա համայնքի 2013-2014թթ. բյուջեների սեփական եկամուտների պլանային ցուցանիշներն ըստ առանձին եկամտատեսակների



Գծանկարում արտացոլված տվյալները հավաստում են, որ Բավրա համայնքի բյուջեում եկամտատեսակներն ընդամենը 4-ն են, ընդ որում՝ գույքի վարձակալությունից եկամուտներ պլանավորվել են միայն 2014թ-ին: 2014թ. Պլանավորվել է հավաքագրել 13 %-ով ավելի քիչ հողի հարկ, փոխարենը 117%-ով ավել է պլանավորվել փոխադրամիջոցների համար գույքահարկը:


Ընդհանուր առմամբ, 2013թ. պլանային սեփական եկամուտներն ունեն գծանկար 20-ում պատկերված կառուցվածքը: Գծանկարից երևում է, որ Բավրա համայնքի 2014թ. բյուջեում սակավ եկամտատեսակներից 2013թ. նկատմամբ առավել բարձր տեսակարար կշռով է պլանավորվել փոխադրամիջոցների համար հավաքագրվող գույքահարկը և հողի հարկը:

Գծանկար 20. Բավրա համայնքի 2013 և 2014թթ. բյուջեների սեփական եկամուտների պլանային ցուցանիշների կառուցվածքը



Ուսումնասիրելով Բավրա համայնքի 2013թ. փաստացի կատարողական ցուցանիշները՝ ներկայացնենք գծանկար 21-ը:

Գծանկար 21. Բավրա համայնքի 2013թ. բյուջեի պլանային և փաստացի եկամտային ցուցանիշները




Գծակարից պարզ է դառնում, որ ընդհանուր եկամուտների կատարողական ցուցանիշը 2013թ. կազմել է 63 %, իսկ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը կազմել է ընդամենը 41 %: Սա վկայում է սեփական եկամուտների հավաքագրման խիստ ցածր մակարդակի մասին:

Բավրա համայնքի 2013-2014թթ. բյուջեների ծախսային ցուցանիշների վերլուծություն

Բավրա համայնքի 2013-2014թթ. բյուջեների ծախսերի պլանային ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ընդհանուր առմամբ պլանավորվել են ավելի ցածր նախորդ տարվա նկատմամբ:

Գծանկար 22. Բավրա համայնքի 2013-2014թթ. բյուջեների ծախսերի շարժընթացը




Կարող ենք փաստել, որ 2014թ. Բավրա համայնքի բյուջեի ինչպես ընդհանուր ծախսերը, այնպես էլ վարչական մասը պլանավորվել են ավելի ցածր, քան նախորդ տարվա բյուջեում: Այսպես, ընդհանուր ծախսերը 2013թ. նկատմամբ պլանավորվել են 5.4 %-ով պակաս, 2013թ. Ֆոնդային մասում որևէ ծախս չի նախատեսվել, իսկ 2014թ-ին նախատեսվել է ընդամենը 85.5 հզր. դրամ::

Համայնքի բյուջեի հիմնական ծախսատեսակների պլանային ցուցանիշներն ուսումնասիրենք ըստ տնտեսագիտական և ըստ գործառնական դասակարգման:

Ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի պլանային ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, 2014թ. համայնքի բյուջեում ծախսեր են պլանավորվել ընդամենը 3 ծախսատեսակների գծով, ընդ որում ընդհանուր առմամբ պլանավորվել են համեմատաբար ցածր ցուցանիշներ, իսկ մյուս երեքի գծով՝ բարձր ցուցանիշներ: Այսպես, 2013թ. նկատմամբ բավական ցածր են պլանավորվել


աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսերը /շուրջ 19 %-ով/, սոցիալական նպաստներին ու կենսաթոշակներին ուղղվող ծախսերը /6 %/, իսկ այլ ծախսեր նախատեսվել է միայն 2014թ. համայնքի բյուջեում: Մնացած որևէ ծախսատեսակով ծախս չի նախատեսվել:

Գծանկար 23. Բավրա համայնքի 2013-2014թթ.բյուջեների հիմնական ծախսատեսակների պլանային ցուցանիշներն ըստ տնտեսագիտական դասակարգման



Համանման վերլուծություն կատարենք նաև ըստ գործառնական դասակարգման ծախսերի ուղղությամբ:

Գծանկար 24. Բավրա համայնքի 2013-2014թթ.բյուջեների հիմնական ծախսատեսակների պլանային ցուցանիշներն ըստ գործառնական դասակարգման



Եզրակացություններ և առաջարկներ

Սույն հետազոտության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների հիման վրա կատարել ենք մի շարք եզրակացություններ ու առաջարկներ, որոնք ներկայացնում ենք ստորև:

- Ինչպես ՀՀ գյուղական համայնքների մեծ մասում, այնպես էլ ուսումնասիրվող համայնքների բյուջեներում առկա է ֆոնդային մասում և եկամուտների և ծախսերի պլանավորման ու իրականացման խնդիրը: Հարկ ենք համարում նշել, որ 3 գյուղական համայնքներից միայն Աշոցքի համայնքային բյուջեում էր, որ 2013-2014թթ. նախատեսվել էր հավաքագրել եկամուտ: Սա բերում է համայնքի երկարաժամկետ զարգացման հեռանկարի վտանգմանը, ուստի անհրաժեշտ ենք համարում, որ տեղական ինքնակառավարման մարմիններն այս ուղղությամբ քայլեր ձեռնարկեն և աստիճանաբար պլանավորեն ֆոնդային մասի եկամուտներ և ծախսեր:

- Ցուցանիշների վերլուծությունը վկայում է, որ համայնքների բյուջեներում դեռևս բարձր տեսակարար կշիռ են կազմում պետական բյուջեից ստացվող պաշտոնական տրանսֆերտները՝ համահարթեցման նպատակով հատկացվող դոտացիաները: Ուսումնասիրվող համայնքների բյուջեներում այդ ցուցանիշը տատանվում է 50-60 %-ի շրջանակներում ըստ տարիների: Սա նվազեցնում է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը՝ բարձր կախվածության մեջ պահելով պետական կառավարման մարմինների կողմից հատկացվող դրամական միջոցներից: Մեր կարծիքով, այս իրավիճակը կապված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով, որի մասին փաստում են ուսումնասիրված համայնքների բյուջեներում հավաքագրման՝ միմյանցից խիստ տարբեր մակարդակները: Այս ուղղությամբ առաջարկում ենք տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, քննարկել առկա հիմնական պատճառները, գտնել որոշակի լուծումներ ու մշակել սեփական եկամուտների հավաքագրման համալիր ծրագիր յուրաքանչյուր համայնքի համար և հետևողականորեն իրականացնել այդ ծրագիրը: Օգտակար կլինի նաև կազմակերպել փորձի փոխանակում՝ սեփական եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ արձանագրած համայնքների ղեկավարների հետ:

- Վերոնշյալը պայմանավորված է նաև համայնքի ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ցածր մակարդակով: Ուսումնասիրվող 3 համայնքներից միայն Աշոցք համայնքում է գերակատարվել սեփական եկամուտների՝ պլանավորված ցուցանիշը: Ցողամարզ և Բավրա համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը գտնվում է բավական ցածր մակարդակի վրա՝ չանցնելով 70%-ը:

- Ուսումնասիրված 3 համայնքների բյուջեներից 2-ում՝ Ցողամարզում և

Բավրայում, եկամուտների գերակշիռ մասը ձևավորվում է հարկային եկամուտներից՝ գույքահարկից և հողի հարկից: Բացակայում են օրենքով սահմանված սեփական եկամտատեսակներից գումարների հավաքագրումը, ինչպիսիք են համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարները, տեղական տուրքերը, տեղական վճարները, պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը և այլն: Առաջարկում ենք մանրամասն ուսումնասիրել այս խնդրի հիմնական պատճառներն ու դրա վրա ազդող գործոնները կոնկրետ համայնքում և մշակել գործողությունների ծրագիր՝ համայնքի բյուջեում օրենսդրությամբ սահմանված, սակայն չկիրառվող նոր եկամտատեսակների ներգրավման նպատակով:

- Համայնքի եկամուտների ավելացման հանարավոր ուղիներից ենք համարում նաև համայնքի սեփականություն համարվող գույքի (հող, անշարժ գույք) օտարման և վարձակալության տրամադրման արդյունավետության և նպատակայնության վերլուծության արդյունքների հիման վրա համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման առավել օպտիմալ տարբերակների ընտրությունը:

- Համայնքների բյուջեների ծախսային մասի վերլուծությունը վկայում է, որ դեռևս բավական բարձր մակարդակի վրա են գտնվում աշխատավարձերին և դրան հավասարեցված ծախսերին հատկացվող գումարները: Այս երևույթը բերում է համայնքի զարգացման և համայնքային խնդիրների լուծման խոչընդոտների: Անհրաժեշտ է մշակել և կիրառել համայնքի բյուջեի ծախսերի օպտիմալ նոր կառուցվածք՝ համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:

- Վերլուծությունները փաստում են, որ համայնքների բյուջեների ինչպես եկամտային, այնպես էլ ծախսային մասերում իրականացվում է ցուցանիշների ոչ օրինաչափ պլանավորում և կատարում: Այս առումով կարևորում ենք տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացումը՝ հատկապես պլանավորման և կառավարման ոլորտներում: Օգտակար կլինի կազմակերպել պարբերական վերապատրաստումներ ու դասընթացներ վերոնշյալ ոլորտներում: